

Պաշտոնական ընդհանրապես բ.գ.թ., դրոցենտ Հ.Դ.Ենոքյանի

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Լևոն Գրիգորի Խաչատրյանի «Օնոտոսկրերի դեֆեկտների և արտահայտված ատրոֆիաների իմպլանտացիոն վերականգնման արդյունավետ մեթոդների մշակումը և կիրառումը» թեմայով ԺԴ.00.12 «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիականությունը

Օնոտոսկրի տարբեր ախտահարումներով հիվանդների բուժման արդյունավետ մեթոդների մշակումը և կիրառումը դասվում է դիմաձևոտային վիրաբուժության կարևորագույն հիմախնդիրների շարքին: Հիվանդների այդ խմբի օրթոպեդիկ ռեաբիլիտացիան ոսկրավերականգնողական մեթոդների կիրառմամբ բազմազան են, դրանով պայմանավորված դրանց համակարգում բուժման օպտիմալ մեթոդների ընտրությունը, ինչպես նաև ոսկրի վերականգնված հատվածում տեղադրված իմպլանտների ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության որոշման ժամկետները շատ կարևոր են: Այս ենթատեքստում Լ.Գ.Խաչատրյանի աշխատանքը բավականին արդիական է, ուսումնասիրության նպատակը և խնդիրները հստակ հիմնավորված են:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքում կատարելագործվել են ծնոտոսկրերի դեֆեկտներով հիվանդների մոտ բուժման համակցված մեթոդները անոթավորված արտաբերանային աուտոփոխպատվաստների կիրառմամբ ապահովելով հիվանդների լիարժեք բժշկասոցիալական ռեաբիլիտացիա:

Հիմնավորվել է ոսկրավերականգնողական վիրահատություններից հետո ոսկրագոյացման պրոցեսների գնահատման նպատակով կիրառվող ոսկրի մետաբոլիզմի կենսաքիմիական մարկերների ախտորոշիչ կարևորությունը:

Էնդոսկոպիկ տեխնոլոգիաների կիրառմամբ օպտիմալացվել է վերին ծնոտային ծոցում տարբեր ախտահարումներով հիվանդների մոտ ծոցի էնդոսկոպիկ բուժման և միաժամանակյա սինուսիտի ֆոնդի մեթոդիկան, որը թույլ է տվել կրճատել բուժման ժամանակահատվածը և բարձրացրել իմպլանտացիայի արդյունավետությունը:

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարված աշխատանքների հիման վրա մշակվել և կլինիկական գործունեությունում ներդրվել է ալգորիթմ, որը թույլ է տալիս ընտրել բուժման համապատասխան ուղեցույց տարբեր էթիալոգիայի դեֆեկտներով հիվանդների ոսկրավերականգնողական վիրահատությունների ժամանակ:

Վերին ծնոտոսկրերի արտահայտված ատրոֆիայով և ադենոիայով հիվանդների մոտ ոսկրավերականգնողական վիրահատությունների ցուցումների սահմանափակումների առկայության ժամանակ վերին ծնոտի թմբի և այտոսկրի շրջանում իմպլանտների կիրառման դեպքում բարձրանում է օրթոպեդիկ բուժման արդյունավետությունը և հուսալիությունը:

Իմպլանտ-վերականգնողական վիրահատություններից հետո ծնոտոսկրի վերականգնված հատվածում տեղադրված ատամնային իմպլանտների օստեոինտեգրացիայի աստիճանի որոշումը ռեզոնանս-հաճախականության անալիզի մեթոդի կիրառմամբ թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել իմպլանտների ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության ժամկետները:

Ատենախոսությունը ունի ավանդական կառուցվածք, շարադրված է հայերեն լեզվով համակարգչային մեթոդով հավաքված 152 էջերում: Այն կազմված է ներածությունից, գրականության վերլուծությունից, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտության արդյունքներից, դրանց քննարկումից, եզրահանգումներից, գործնական առաջարկներից և օգտագործված գրականության ցանկից որը ընդգրկում է 148 գիտական հրապարակում: Աշխատանքը լուսաբանված է 35 աղյուսակներով, 10 գծապատկերներով և 161 նկարներով, որոնք ավելի ըմբռնելի են դարձնում աշխատանքը:

Ատենախոսության առաջաբանում հեղինակի կողմից բավականին հիմնավորված ներկայացվել է ատենախոսության ընդհանուր բնութագիրը, հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, վեր են հանվել հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության գիտա-գործնական նշանակությունը:

Գրականության վերլուծության բաժնում ատենախոսը ներկայացրել է ծնոտոսկրերի տարբեր էթիոլոգիայի դեֆեկտներով հիվանդների բուժման ժամանակակից մոտեցումները: Վերլուծվել է ոսկրավերականգնողական վիրահատություններից հետո ոսկրագոյացման պրոցեսների գնահատման նպատակով կիրառվող տարբեր մեթոդները և հիմնավորվել է ոսկրի մետաբոլիզմի կենսաքիմիական մարկերների որոշման անհարաժեշտությունը:

Երկրորդ գլխում ատենախոսը ներկայացրել է ատենախոսության նյութը և հետազոտման մեթոդները: Ներկայացված ատենախոսական աշխատանքը հիմնված է մեծաքանակ կլինիկական նյութի վրա: Աշխատությունում ընդգրկվել են ծնոտոսկրերի տարբեր էթիոլոգիայի դեֆեկտներով և ադենոիաներով 138 հիվանդներ, որոնց մոտ կիրառվել են ոսկրավերականգնողական տարբեր վիրահատական մեթոդներ և իմպլանտների կիրառմամբ օրթոպեդիկ ռեաբիլիտացիա: Ներկայացված ատենախոսական աշխատանքի մեջ հեղինակը կիրառել է գիտական հետազոտության արդիական մեթոդներ (կլինիկա-լաբորատոր, ճառագայթային, ֆունկցիոնալ): Առաջարկված բուժման նոր մեթոդների

արդյունավետության գնահատման համար կազմվել են հիվանդների համեմատության խմբեր (հիմնական և հսկիչ) ռանդոմիզացիայի սկզբունքով:

Երրորդ գլխում ներկայացվել է տարբեր վիրահատական մեթոդները, որոնք կիրառվել են ծնոտոսկրերի դեֆեկտներով և ատրոֆիաներով հիվանդների բուժման ժամանակ: Այս գլխում ընդգրկված են նաև կլինիկական դեպքերի նկարագրություններ, որոնցում կլինիկա-ռենտգենաբանական նկարներով հիմնավորվել է առաջարկվող բուժման մեթոդների արդյունավետությունը, ինչը համահունչ է սպացուցողական բժշկության պահանջներին և ընդգծում է կատարված գիտական հետազոտության գործնական նշանակությունը:

Չորրորդ գլխում վերլուծվել են կլինիկական, լաբորատոր, ճառագայթային և ֆունկցիոնալ հետազոտությունների արդյունքները հիվանդների համեմատության խմբերի մոտ բուժման դինամիկայում, օբյեկտիվ գնահատվել է առաջարկված բուժման մեթոդների մոտակա և հեռակա արդյունքները: Հիվանդների հիմնական և հսկիչ խմբերի մոտ արձանագրված կլինիկական, լաբորատոր և ֆունկցիոնալ ինդեքսների ցուցանիշները մշակվել են աղեկվատ վիճակագրական մեթոդներով, որոնք ապահովել են հետազոտության ստացված տվյալների արժանահավաստությունը:

Եզրակացության մեջ ընդհանրացնելով դիտարկվող խմբերի մոտ ստացված արդյունքների համեմատական բնութագրերը հիմնավորվել են առաջարկված բուժման մեթոդների արդյունավետությունը:

Գիտական դրույթները, եզրահանգումները և գործնական առաջարկները լավ փաստարկված են, համոզիչ և հիմնված են բավարար քանակի կլինիկական նյութի մանարկրկիտ վերլուծության արդյունքների վրա:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են տարբեր միջազգային կոնգրեսներում, 17 հրատարակված աշխատանքները և սեղմագիրը արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Հետազոտությունները կատարվել են բարձր մեթոդաբանական մակարդակով: Ներկայացված կլինիկական նյութի բնութագրերը, հետազոտությանը մասնակցող հիվանդների համեմատության խմբերը և հետազոտությունում կիրառված մեթոդները բավարար հիմք են ստեղծում հավաստի տվյալների ստացման համար: Հետազոտությունների արդյունքում առաջարկվող գործնական առաջարկները ունեն կիրառելի նշանակություն և կնպաստեն ծնոտոսկրի տարբեր էթիոլոգիայի դեֆեկտներով և ատամնաբնային ելունների արտահայտված ատրոֆիայով հիվանդների բուժման արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության գրախոսության ժամանակ առաջացան որոշ հարցեր, որոնց մեկնաբանությունը կցանկանայի լսել ատենախոսից:

1. Առաջացել են արդյոք վերին ծնոտային ծոցի լորձաթաղանթի թափածակում այն հիվանդների մոտ, որոնց մոտ կատարվել է ծոցի միաժամանակյա էնդոսկոպիկ բուժում, սինուսիտինգ և ատամնային իմպլանտացիա: Ի՞նչ տակտիկա է ընտրվել այդ հիվանդների մոտ, արդյո՞ք ազդել է այդ բարդությունը իմպլանտացիայի արդյունավետության վրա:

2. Ստորին ծնոտի ֆրոնտալ հատվածում սարկոմայով հիվանդի մոտ ծնոտի մասնահատումից և նրբույթով ոսկրի վերականգնումից հետո արդյո՞ք կատարվել է հետվիրահատական ճառագայթային թերապիա, եթե այո՝ արդյո՞ք ճառագայթային թերապիան ազդել է այդ հատվածում տեղադրված իմպլանտների օստեոինտեգրման ցուցանիշների վրա:

Եզրակացություն

Լևոն Գրիգորի Խաչատրյանի «Ծնոտուկների դեֆեկտների և արտահայտված ստրոֆիաների իմպլանտացիոն վերականգնման արդյունավետ մեթոդների մշակումը և կիրառումը» թեմայով ԺԴ.00.12 «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, ունի գիտատեսական և գործնական կարևոր նշանակություն, արդյունքները հավաստի են: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից առաջարկված պահանջներին, որոնք ներկայացվում են գիտությունների թեկնածուի ատենախոսությանը, իսկ հեղինակն արժանի է հայցվող կոչմանը:

«Նաիրի» բժշկական կենտրոնի

պլաստիկ և դիմաձևոտային

վիրաբուժության ծառայության

ղեկավար՝

բժշկական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Հ.Գ. Ենոքյան**

բ.գ.թ. դոցենտ **Հ.Գ. Ենոքյանի** ստորագրությունը հաստատում եմ «Նաիրի» ԲԿ -ի
Գլխավոր տնօրեն **Ն.Ռ. Մանվելյան** 13 **XIV** 2019թ.

